

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլ. Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Փ օ ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից):

Գալտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով:

Գալտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Փ օ ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Դ Ի Ր Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ԲՈՎԱՆԴԱՎՈՐՈՒԹԻՒՆ

Խաղաղութիւն թէ պատերազմ. Լօնդոն գնացած սասունցիները. Արեւմտեան միտնաբերների տեղեկագիրը. Հայոց հարցը և եւրոպական մամուլը. Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտուրիզմ և հոգեբանականներ. Իմ պատմականը. Գիտու ակցիդ. Նամակ Նուրից. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Անգլիայից. Արտաքին լուրեր. Հեռագրի միջոց. ԲՈՐՈՍԱ. ՏԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թիւրքիայից:

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԹՇՇ ՊԱՏԵՐԱԶՄ

Հաղիւ երկու շաբաթ է անցել այն օրից, երբ Սիմոնսոնիւմ ստորագրվեց չինա-եւրոպական խաղաղութեան դաշնագիրը, հաղիւ երկու շաբաթ է անցել այն օրից, որ եւրոպական վայր զրեց իր յաղթական զենքը, իսկ սարափահար Չինաստանը մի փոքր շունչ քաշեց. — և ահա արեւմուտքից ըստ պատմաբանի ձայնի են լսվում Պեկինում և Նոհոհամայում...

Եւ թէ և դեռ նոր են սկսել լսվել այդ քաղաքական սպառնալիքի ձայները, բայց արդէն պարզ է, որ եւրոպան բաժանվում է երկու մասի. Անգլիան, գուցէ նրա հետ միասին իտալիան և Միացեալ-Նահանգները գտնուում են չինա-եւրոպական խաղաղութեան պայմանները ձեռնուռ, արգար, հնարաւոր, իսկ միւս կողմից Ռուսաստանը, Գերմանիան և Ֆրանսիան բացարձակ գոչում են՝ «Մենք համաձայն չենք»:

Ոչ Չինաստանը, և ոչ նոյն իսկ Եւրոպական այդ չէին սպասում, և այդ պատճառով, ինչպէս երևում է վերջին հեռագրի ներքից, ոչ թէ միայն երկնային կայսրութեան մէջ, ուր ուրիշ ոչինչ չեն ուզում, բայց եթէ խաղաղութիւն և գին աշա-

ղա րա այլ նոյն իսկ յաղթական եւրոպայի մէջ ահազին յուզումը է առաջ եկել...

Ռուսաստանը, Ֆրանսիան և Գերմանիան յայտարարեցին արդէն, որ եւրոպական պայմանները, որ ընդունել է Չինաստանը, ձեռնուռ չեն և նոյն իսկ փնտաւար են իրանց քաղաքական և առեւտրական շահերի համար. — ուստի ոչ մի կերպ թող չեն տայ, որ այդ խաղաղութեան դաշնագիրը դործադրվի իսկ Անգլիան, որ հաւանորէն համաձայնութիւն ունի Միացեալ-Նահանգների և իտալիայի հետ, հաւատացնում է եւրոպային, որ երեք պետութիւնների սպառնալիքը դիպլոմատիական սահմանից դուրս չի գայ, ուստի ոչինչ զինդութիւն չը պետք է անել...

Դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ քաղաքական ընդհարումն, որ պատմութեան մէջ շատ անգամ տարել է դէպի պատերազմ, դէպի արեւուն...

Հեռու արեւելքում, երկու միմեանց թըշնամի, միմեանց արեւը թափող պետութիւնները խաղաղութեան դաշնագիր են ստորագրում, իսկ Արեւմուտքում, միմեանց բարեկամ, միմեանց հարեան պետութիւնները այդ խաղաղութեան դէմ պատերազմ են յայտնում...

Խաղաղութիւն թէ պատերազմ:

ԼՕՆԻՐՈՆ ԳՆԱՅԱՄ ՍԱՍՈՒՆՅԻՆԵՐԸ (Westminster Gazette)

Սասունցի հայերի ներկայացուցիչները, որոնք հրաշքով ազատվել են թիւրքերի և քրդերի ձեռքից և փախել եկել են Լօնդոն, ներկայացան անգլո-հայկական ընկերութեան վարչութեան: Նրանց թարգման է Գրին հոգեբանականը:

Կարապետ եպիսկոպոս, Հալէպէն.

Ղևոնդ քահանայ, Հալէպէն.

Պիլանցի Նշան քահանայ Ստեփանեան, Հալէպէն.

Սիմէոն վարդապետ Ղևոնդեանց, Պոլսանքիցի, վանահայր Գոփայ Ս. Գանիէլի.

Մշեցի Աբրահամ վարդապետ, միաբան Ս. Առաքելոց վանքին.

Խաչատուր քահանայ Տ. Յարութիւնեան, Ալաշկերտից:

Թաթևուր քահանայ Կարմիրեան, Չարչամազլի.

Վարդան վարդապետ Բրոստրոնեան, Քէմալիցի.

Միքայէլ քահանայ Թահմաշեան, Սամսոնցի.

Աճէմեան Արիստակէս վարդապետ.

Կազանեան Յովնանէս եպիսկոպոս.

Կարապետ քահանայ Նրեցեան, Արմանցի:

Չը նայելով որ այդ մարդիկ կայսերական իրաւէով ազատ արձակուած էին՝ Պոլսի հասածնուն պէս սովորաբար զորքերով ոստիկանատուն առաջնորդուեցան, որտեղ բանտարկուած մնացին:

Ջանի մը շաբաթ է միայն խօսվում որ յանձնուեցան Ազգային պատրիարքանին:

Տեսնելու արժանի բան էր այս մարդոց ողորմելի երեւոյթը, բոլորին ալ ցնցոտիներ հազուած, մէկ մասը գիշերազգեստով, զուլմիսին անծուրդ իւրոտ ֆէս մը, վրային մէյմէկ մաշած կաղմա փաթթուած, պատուած կոշիկներով:

Սրբազան պատրիարքը զիրենք առ ժամապէս տեղաւորեց մէկ մէկ եկեղեցի, պատուելով որ անոնց ընթացիկ պէտքերը անվերջ հողացուին:

Չատիկ երկրորդ օրը պատրիարքը փառաւոր ընդունելութիւն մը կատարեց Ազգային պատրիարքարանի մէջ: Ժամը վեց ու կէսին սկսեալ, մեծ դահլիճը հնոգնեւեղ կը զբաւուէր ազգային երեսփոխաններու, վարչական ժողովներու, թաղ. խորհուրդներու, հողաբաժնութեանց և ազգային ընկերութեանց ներկայացուցիչներու կողմէ: Ժամը ճիշդ եօթին (ըստ թիւրքականի), նորին սրբազնութիւնը կը յուսամ որ նոյն այդ արդարութիւնը ի

Սասունցի Պետրոսեան յայտնեց, որ նա, իր կինը և իր ընկերը կորցրել են ամեն բան, ինչ որ ունէին այս աշխարհում: Ազգականները համարեա մեծ մասը կոտորված է: Միակ երեսան յափշտակել են մօր ձեռքից և թիւրք զինուորը նրան սպանեց մօր աչքի առաջ: Նոյն կը ցանկանար, որ պաշտօնական կերպով, դեսպանների ներկայացուցիչների մասնակցութեամբ, իրան ենթարկեն հարց ու փորձի:

Սասունցիները հաւատում են, որ Անգլո-Հայկական ընկերութիւնը, որ իրան նպատակ է դրել նպաստել հայկական հարցի լուսաբանութեան, կարող կը լինի դործը այնպէս կարգադրել, որ նրանցին մանրամասն վիճարկութիւններ ստացվեն: Բարեկամների օգնութեամբ նրանք կարողացել են գաղտնաբար փախչել Թիւրքիայից և հասել են Անգլիա պատմելու, թէ ինչ բաներ են աշխատեա եղել սեփական աչքերով: Սասունցի Պետրոսեան աւելացրեց, որ իրանք մեծ հաւատով ու յոյսով են նայում անգլիական ազգի օգնութեան վրա:

Գրանից յետոյ սասունցիները երգուեցին և դատաւարը մանրամասն հարց ու փորձ արեց և իմացածները արձանագրեց:

Սասունցիների առաջնորդ՝ Դոկտոր Բադրատ Ալայան, ամեն տեղ, ուր լինում են ուրիշ թարգմաններ, առաջարկում է, որ նրանք հարց ու փորձ անեն և համոզվեն, թէ փախստականները բռն երկրից են և ամեն բանի ակնատես են եղել: Գրին հոգեբանականը բաւական ծանօթ է հայերին լիզուլին, որովհետեւ, իբրեւ անգլիական միսսիայի անդամ, նա ապրել է Փոքր-Ասիայում, և թէ և դժուարանում է Սասունի բարբառի մանրամասնութիւնները հասկանալ, բայց զլլաւոր բովանդակութիւնը միշտ

ըմբռնում է: Սասունցիները իրանց անպաճոյճ, կարճ խօսքերով, իրանց անկեղծ պատմելու ձևով շատ շուտ գրաւում են հարցնողին և գործում են ճշմարտախօս մարդկանց տպաւորութիւն:

Սասունցիները իրանց ազգային զգեստներով հետաքրքրում են շատերին: Անգլիացիները մօտենում են, ուսումնասիրում այդ զգեստը, որ շատ հասարակ է, բայց ոչ տղեղ: Սասունցիների լուսանկարները մի քանի տեսակ հանված են:

Անգլիական հասարակութեան համար, որ իր հիւպատոսների, իր լրագրական թղթակիցների ղեկուցումներ շնորհիւ համոզվում է, որ բոլոր գաղանկութիւնները տեղի են ունեցել, աւելացաւ և մի նոր վկայութիւն, մի նոր ապացոյց:

ԱՎԱՆԱՏԵՍ ՄԻՍԻՆԱՐՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԿԻՐ

Ամերիկայի ինդիանացի ընդհանուր հրատարակվող «News» լրագիրը իր մարտի 26-ի համարում տպագրել է մի յօդուած «Մեծ Բրիտանիա և Հայաստան» վերնագրով, որը ահա առաջ ենք բերում:

«Ուշադրութիւն ենք հրաւիրում այն տեղեկագրի վրա, որ տպվեց մեր լրագրի սիւնակներում Հայաստանում եղած կոտորածների մասին: Նա այն սովորական տեղեկութիւններից չէ, որոնք այս կամ այն ձևով երևացել են մեր լրագրի էջերում, այլ նա այն արժանաւորութիւն ունի, որ ստացված է ուղղակի մի անձից, որ կոտորածի սարսափները կատարվելուց մի քանի օր յետոյ ճանապարհորդել է այդ երկրում և, հետաքրքար, ամեն տեսակ հնարաւորութիւն է ունեցել ստուգել իրողութիւնները: Այդ տեղեկագիրը գրվել

գործ կը դնէ մեր աշխարհական բանտարկեալներուն վրա ևս: Միայնք որ Աստուած իր խնայողութեամբ առաջնորդէ նորին վեհափառութիւնը և առողջութիւն պարգեւէ իրեն (թիւթ և միմեանց) ներ, որոնք «Ամեն» ըլլալ կենթադրեն:

Պատրիարքը իր ճառը վերջացրեց հետեւալ խօսքերով:

«Մեր ներքին վարչական գործերը, տեսքը երեսփոխանը, բարեւոյ լիճակի մէջ են և մեր արտաքին յարաբերութիւնը շատ յուսալից. կը մաղթեմ որ հայ ազգին վրա ծանրացող թշուառութիւնը անհետանայ ի մօտոյ. թող ամեն հայ ի սրտէ աւետեն իրարու «Բրիտոստ յարեալ ի մեռելոց»:

Եւ այս վերջին պարբերութիւնը երեք անգամ կրկնեց պատրիարք հայրը, շնչելով իւրաքանչիւր բառին վրա:

Այս բանախօսութիւն որոտնդոտ ծափելով և «կէցցէ սրբազան պատրիարքը» աղաղակներով ընդունվեցաւ:

Ընդունելութեան ներկայ էին նաև մայրաքաղաքիս գրեթէ բոլոր եպիսկոպոսները և քաղաքաւ եկեղեցականներն շատերը:

Սոյն պաշտօնական ընդունելութիւնէն զատ պատրիարքը Չատիկ երեք օրերն ալ շարունակ ընդունեց ամեն զատակարգի ազգայիններու՝ այցելութիւնը, ինչպէս նաև բոլոր զլլաւոր դեսպանատանց թարգմաններուն, ձկնալարթարի անկիւնան եպիսկոպոսին, Մէմօրիլ Չըբի երեցին և պուրկարական գործակատարին շնորհաւորական այցելութիւնները:

Չատիկ երկուշաբթի զիշերը ծանօթ մասնիկ և ոստիկանութեան դաղտնի պաշտօնայ Արտաշ անուն հայր սպանուեցաւ Բերայի մէջ. իբր հեղինակ սոյն գործին՝ ոստիկանութիւնը ձերբակալած է Չաքար անուն հայ մը:

Հրաչեայ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՑ

Կ. Պոլսի, ապրիլի 7-ին

Գայտնի է թէ սուլթանը, Անգլիոյ դեսպանին յաճախակի ձեռնմանքուն վրա, հարկադրուեցաւ ազատ արձակել քաղաքում կամ բանտարկված եկեղեցականներուն մեծագոյն մասը, որոնք հետզհետէ Կ. Պոլսի կը հասնին: Առաջին եկեղեցիները եղան Արաբկիլիսի առաջնորդ Նիկի եպիսկոպոս Ապահունի և Առանայի առաջնորդ Մկրտիչ եպիսկոպոս վեհապետեան: Կառավարութիւնը զանոնք առանձին հիւրանոցի մէջ երկու օր բանտարկելէ յետոյ յանձնեց պատրիարքարանին, պատուիրելով, որ երդում ընեն անգամ մըն ալ կառավարութեան դէմ չը մեղանչելու և դաւաճական կարեւոր պաշտօններ չը ստանձնեն:

Պատրիարք հայրը պատասխանած է, թէ այս մարդիկը իրենց չը գործած մէկ յանցանքին համար չեն կրնար երդնուլ. իսկ գալով դաւաճական պաշտօն չը վարելու մասին եղած պատուէրին՝ սրբազանը յայտարարած է թէ, այդպիսի պատուէր մը հակառակ է ազատ արձակման կայսերական իրաւէին, ըստ որում կը նշանակէ պարզապէս իրենց քաղաքաւայրը փոխել, առանց կատարեալ ազատութեան. ինչն կայսերական իրաւուն տարբեր կերպով կըմտնէ, և կը կարծէ, թէ իրաւունք ունի բարդէն կամ բանալն ազատուած բոլոր եկեղեցականներուն դաւաճական մէկ մէկ յարմար պաշտօն որոշել: Առ այժմ Չատիկ առթիւ Նիկի եպիսկոպոսը զրկեց Պոլսէն գիւղի, և Մկրտիչ եպիսկոպոսն ալ Պէտլուքէի եկեղեցին:

Բանի մը շաբաթ առաջ Պոլսի հասան հետեւալ եկեղեցականները.

է ոչ թէ հրատարակութեան համար, այլ միայն տեղեկութիւն տալու այն անձին, որին ուղղված է: Մենք արտօնութիւն չունենք յայտնելու ոչ գրողի և ոչ ստացողի անունները: Ինքնապատշաճ միջնակ և չափազանց շատ երկար ճանապարհ է, սակայն թիւրք կառավարութիւնը երկար բազուկներ ունի և, անկասկած, եթէ մենք գրողի անունը և բնակավայրը յայտնենք, իսկոյն կը հաղորդեն թիւրք կառավարութեան և գրողը վտանգի կենթարկվի:

«Յայտնի է, որ թիւրք կառավարութիւնը ամենաեռանդուն ջանքեր արաւ, որ իսկական իրողութիւնները չը հասնեն Եւրոպայ: Հայաստանում ապրող ամերիկական միսիոնարները հէնց որ ստացան կոտորածի լուրը, իսկոյն մի հաւանաբար տեղեկագիր կազմեցին, բայց նրանք չը համարձակվեցին այդ տեղեկագիրը ուղարկել սովորական պատասխին ճանապարհով, այլ ծածուկ ուղարկեցին տեղեկագիրը, մի յատուկ սուրհանդակի ձեռքով, Պարսկաստան և այդտեղից տեղեկագիրը՝ ուղարկվեց Նիւ-Իորկ, Պորտ ընկերութեան: Պորտ ընկերութիւնը խոսեցութիւնից զըրգված՝ միսիոնարներին վտանգի չենթարկելու համար, չը հրատարակեց այդ տեղեկագիրը, բայց երբ քրիստոնեաների զայրոյթը իր սահմանն անցաւ, նա լոյս հանեց այդ գրութեան բովանդակութիւնը:

«Թիւրք կառավարութիւնը, ինչպէս գիտենք, համաձայնվեց նշանակել մի միջազգային յանձնաժողով՝ զազանութիւնները քննելու համար, բայց նա բացէ ի բաց մերժեց Սիլվան ամերիկական հիւպատոսին՝ Միլօ Զէվէտին, որքան յանձնաժողովին: Պատճառը շատ պարզ է. Զէվէտը գիտէ թիւրքերէն և ճանաչում է թիւրքերէն:

«Աշխատելով սուտ դուրս բերել այն բոլոր տեղեկութիւնները, որոնք ստուգվում են թիւրքերայի և Հայաստանի մասին մասնաւոր աղբիւրներից և լրագիրների թղթակցիցներից, թիւրք կառավարութիւնը ամենագործը ջանքեր էր անում արգելել յանձնաժողովին մի իրական քննութիւն կատարելու, այն է նա արգելում էր ականատես վկաներին ցուցմունքներ տալու յանձնաժողովի առաջ: Եւ այդ կերպով քննիչ յանձնաժողովը իսկապէս դուրս է գալիս իբրեւ մի ծաղր...»

Հարկաւոր ենք համարում մեր կողմից աւելացնել, որ ականատես ճանապարհորդի տեղեկագիրը, որ տպվել է «News» լրագրի մէջ, միանգամայն նման է այն բոլոր տեղեկագրերին, որոնք տպվել են Սասունի կոտորածի մասին թէ եւրոպական, և թէ մեր՝ հայոց լրագիրներում:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԸ ԵՒ ԵՒՐՈՊԱՆ ՄԱՍՈՒԼԸ

I

Քննիչ յանձնաժողովի մասին, «Բէյութերի գործակալութիւնը» հաղորդում է Կ. Պոլսից հետեւեալը.

«Յանձնաժողովը ժողովել է մեծ քանակութեամբ միջոցներ: Ապրիլ ամսի վերջում (եւրոպական հաշուով) յանձնաժողովի անդամները անձամբ կայացել են Սասունի գիւղերը և հաւանական է, որ յունիսի սկզբին նրանց զեկուցումը պատրաստ կը լինի:

Կ. Պոլսի հայերին մեծ դարմանք է պատճառում այն բանը, որ քննիչ յանձնաժողովը մինչև այժմ չէ պահանջել և հարց ու փոփոխ չէ ենթարկել բժիշկ Բոյաշեանին, որ աւելի յայտնի է Մուրադ անունով, Բիթլիսի նախկին նահանգապետ Թաւաթին փաշային և զօրքերի հրամանատար Աքբի փաշային և այն երկու գնդապետներին, որոնք առաջնորդում էին զինուորներին Սասունի լեռներում:

II

Լոնդոնի «Westminster Gazette» լրագիրը հաղորդում է, որ Ատկինը ստացել է մի նամակ Վաղարշապէից, որի մէջ ասում է, թէ «մեր ամենամեծ սխալը այն կը լինի, եթէ մենք ընկնենք թիւրքերի խօսքերի և խոստումների ցանցի մէջ: Բարենորոգութիւնների մասին թիւրքերի խոստումները արժանի չեն այն օգին, որով նրանք արտասանում են: Ոչ մի գին, ոչ մի արժեք պէտք չէ տալ թիւրքերի ասածներին:» Ստորագրված է W. E. G.

Նամակը գրված է ապրիլի 3-ից:

III

Լոնդոնի «Morning Post» լրագրում տպված է հետեւեալ Կ. Պոլսից, ապրիլի 15-ից.

«Ամերիկական պատերազմական Սան-Ֆրան-

ցիսկօ նաւը, (որի մասին հաղորդել էինք անցեալ անգամ) արդէն հասել է Զմիւռնիա և վաղը պէտք է ճանապարհովի Բէյրութ: Այդ նաւը, ինչպէս և Մարքիզիոյ նաւը, որ նոյնպէս սպասվում է Զմիւռնիայում, պէտք է չըջնն Սիրիայի ափերին, որպէս զի հսկեն ամերիկական հպատակների կենքի պաշտպանութեան վրա: Նաւապետ կըրկանը այցելութիւն արաւ Զմիւռնիայի նահանգապետին և ամերիկական հիւպատոսին:

IV

«Times» և «Daily Telegraph» լրագիրների թղթակցները նկարագրելով Փաշա-Ասիայում տիրող ներկայ վիճակը և այն լարված յարաբերութիւնը, որ կայ մահմուդական և քրիստոնեայ ժողովրդի մէջ, նախազգուշացնում են, որ եւրոպական կառավարութիւնները պէտք է միջոցներ գործ դնեն, որպէս զի քննիչ յանձնաժողովի այնտեղից հեռանալուց յետոյ տեղի չունենան ընդհարումներ և կոտորածներ: Թղթակցները իբրեւ ապացոյց պատմում են այն դէպքերը, որ նորբա պատահել են Փաշա-Ասիայում զանազան տեղերում, ուր թիւրք ոչ միայն ամբար, այլ և զօրքը դաւաճութիւններ են իր սարքում քրիստոնեաների դէմ, և ձգտում էին մի նոր Բարդուղիմէոսեան գիշերառաջ բերել:

Կառավարութիւնը հազիւ է կարողանում կարգը պահպանել և զսպել իր նախկին վարժունքներով ֆանատիկոսացած և երես առաւ մոլեռանդ ամբարներ:

V

Թէ անդլիական և թէ ամերիկական լրագիրները ստացել են հետագիր Կ. Պոլսից, ապրիլի 1-ից, թէ Բ. Գուռը արդէն պատրաստել է հայկական բէֆօրմների ծրագիրը և կամենում է ենթարկել պետութիւնների քննութեան: Տեղական ժանդարմէրիայի կազմութիւնը պէտք է յանձնվի գերմանացի Հօլց փաշին:

VI

Լոնդոնի «Morning Post» լրագրին հաղորդում են Կ. Պոլսից, ապրիլի 12-ից, որ կազմվել է մի միսիոնարական յանձնաժողովով, բաղկացած արտաքին գործերի, ներքին գործերի, արդարադատութեան միսիոնարներից և մեծ-վիզիրից, որին յանձնված է մշակել Հայաստանում մտնուկի վարչական բարենորոգութիւնների ծրագիրը:

Միացեալ Նահանգների նաւերի Սիրիայի ափերը գալու լուրը մեծ տպաւորութիւն է թողել օսմանեան կառավարութեան շրջաններում:

Միացեալ Նահանգների դեսպան Կ. Քէրէլը իրան եղած պաշտօնական հարցման պատասխանեց, թէ նաւատորմը ուղարկվում է պաշտպանելու ամերիկացի հպատակներին հարկաւոր դէպքում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆՏՐՈՒԶՄ ԵՒ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐ

I

Զոհել անձնական բարեկեցութիւնը, եւս, ուրիշ բարօրութեան համար, մոռանալ իրան «ոչ-ես»-ի համար, — ամենաբարձր բարոյական զգացմունքն է, որ քարոզել է Քրիստոս: Այժմեան փրկութիւնը այդ գաղափարը կոչում է աւտոբիոլոգի և նրան ընդունում է իբրեւ հիմնաքար հասարակական առաջադիմութեան:

Իսկական քրիստոնէութիւնը ալտուրիստական դաւանանք է: Հոգեւորական դասակարգի կատարյալն նախապաշարմունքներով և շահերով չէ կառուցուած: Նրանք ինքն անտարանի ոգուն, որը անձնականը զոհում է ընդհանուրին:

Աւետարանի բարոյիչը պէտք է թողնի ամեն մի իշխանասիրական բռնակալական ձգտում և դառնայ ժողովրդի սպասաւոր, նա իր անձը պէտք է դնի «եղբարց» բարօրութեան համար: Այլապէս քրիստոնեայ հոգեւորականը կռապաշտական հոգեւորականութեան հետեւող է դառնում և չէ տարբերվում նրանից: Ալտուրիստը չէ կարող դէմ լինել այն բոլորներ, ինչ որ ընդհանրութեան համար բաւրել է. նա մինչև անգամ իր ետական շահը մի կողմ դնելով պէտք է ձգնի ձեռք բերելու այն, ինչ որ ուրիշների բարօրութեան տեսակետից անհրաժեշտ է:

Սիստեմի բերված ճշմարտութիւնները — այսինքն գիտութիւնը, մարդուն միջոց են տալիս օգտվել թէ իր և թէ ընտանիքի ոյժերով, աւելի զիւրին կերպով բարօրութեան հասնելու համար: Արդարաւ զատութիւնը բոլոր մահ-

կանացուների համար հաւասար օրէնքներ սահմանելով, իւրաքանչիւրին հաւասար դիւրութիւն տալով երևան հանել չարագործութիւնը՝ ապահովում է մարդու տարրական իրաւունքը՝ անձի, ստացուածքի և պատուի անընարարութիւնը ու ժողովրդի կամայականութիւնները: Habeas corpus-ը բարօրութեան անհրաժեշտ տարր է: Արդարադատութեան առաջ աստիճանը, դասակարգը նշանակութիւն չունեն:

Ուրեմն գիտութիւնը, ինչպէս և արդարադատութիւնը ընդհանրութեան բարօրութեան համար անհրաժեշտ գործոններ են: Ալտուրիստը, ուրեմն և ակաւարանի ոգուն հաւատարիմ իւրաքանչիւր անձ, չը պէտք է դէմ լինի այդ գործոններին: Այնտեղ, ուր արդարադատութիւն չը կայ, պէտք է տիրի անիրաւութիւն, որը ձեռնառու կարող է լինել մի-միայն մի քանիսի համար և ոչ ընդհանուրի:

Որտեղ ընդհանրութիւնը, ժողովուրդը, կամ նրա ընտրածները չեն քննում օրէնքները, այլ մէկը կամ մի քանիսի քմահաճութիւնը օրէնք է յայտարարվում և կամը անսխալական՝ այնտեղ կամայական բեժիմ է տիրապետում, որը ձեռնառու է միայն այն անձանց, որոնք ձեռնում են իշխանութեան զեկը կամ իշխանաւորի մերձաւորներն են:

Օրինականութիւնը, ընդհանուր ընտրողական սկզբունքների վրա հիմնված հաստատութիւնները՝ առաջ են բերում գործերի մէջ անհրաժեշտ կանոնաւորութիւն և զէպի անձինք անաշու փերարութիւն, որովհետեւ ամեն ինչ հասարակական կարծիքի քննադատող բովից է անցկենում, այդտեղ լայն մտածութիւնը, քսուած իւրեւր, շոգորթութիւնը, բանասերութիւնը և անդի ունենալ չեն կարող: Իսկ երբ ամեն բան կախված է մէկի կամ մի քանիսի քմահաճութիւնից, այն ժամանակ բացվում է ազատ ապագայի կաշառակութիւնը, եւս մտածութիւնը, վրէժ ժխնդրութիւնը, քսութեան և ստոր, զրպարտական, ճնշող միջոցների: Այդ պայմաններում մարդիկ բացորձակ կերպով, օրէնքներին դիմելով, չեն կարող պաշտպանել իրանց իրաւունքները: Իսկ նրանք, որոնք ձեռնառու է կամայականութեան, աշխատում են ամեն կերպ խեղտել արդարադատութեան՝ առողջ խելքի և ազնիւ սրտի՝ պահանջները: Անիրաւութիւն անողները աշխատում են սուտ ու խաբէրայական դատողութիւններով, կեղծիքներով, առապենքներով՝ անսխալականութեան սանկցիա, աստուածային ծագում տալ իրանց կամայական գործողութիւններին և դրա համար դիմում են կրօնին, չանկանալով նրան գործը չինել իրանց ձեռքում:

Ալտուրիստ, լաւագոյն հոգեւորականութիւնը ի հարկէ կը մերժի կամայականութեան հետ դաշնակցութիւնը և հաւատարիմ կը մնայ ժողովրդին, որից և որի համար նա ընտրվում է: Ժողովրդի հաւաքական արտայայտութեան — եկեղեցու ապաստար դառնալով, արժանաւոր հոգեւորականը պէտք է աշխատի ժողովրդի բարօրութեան համար, որը գիտութեան և արդարադատութեան հետ է կապված. նա ժողովրդի հաւատարիմ սպասաւորը պէտք է լինի և ոչ նրա վրա իշողող, տէրը. նրա իրաւունքները պաշտպանողը պէտք է լինի և ոչ իրաւունքների ոտնակոյտ անողը: Կասկածաբային կեղեքական շահեր նա չը պէտք է ընդունի, այլ միայն ժողովրդական: Բարոյական կրօնը չէ վախենում ճշմարտութիւնից, այլ ձգտում է նրան: Վարդապետներ ֆէտիշիզմն են, որը ինքնապաշտպանութեան համար դիմում է նախապաշարմունքներին և երկիւղի: Շամանների կամ քրմերի դասակարգերն են վախենում ժողովրդի ինքնաճանաչութիւնից և չարագործ հոգեւորականներն են հալածում ճշմարտութիւն խօսողներին:

Յայտնի է, որ քրիստոնէական եկեղեցու անուից չարագործութիւններ անող եզոիտները հալածվեցին գիտութեան և ժողովրդի համար գործողներից իբրեւ չլուսավար հակաքրիստոնէական տարր: Նրանք, որոնք տանջում, այրում, մեռցնում էին անմեղ մարդկանց, ստեր, կեղծիքներ տարածում, բռնութեան օժանդակիչներ հանդիսանում, յեղաշրջում իրանց գարշիկ նպատակների համար աւետարանը, կղերի իշխանութիւնը զօրացնում, կղերի անսխալականութիւնը յայտարարում, ժողովրդի համար բռնութեան շղթաներ կռում՝ համարձակում էին իրանց հետեւող համարել մարդկանց համար հալածված, տանջված, խաչված Քրիստոսին...

Հեղուկեան, սիրոյ, անձնուրացութեան փոխա-

րէն այդ հոգեւորականութիւնը ընկել էր դոռողութեան, եւամոլութեան, մամոնայի և աշխարհային վայելչութիւնների երկրպագութեան ետեւից: Իր անձը հօտի, ժողովրդի համար դնելու փոխարէն նրանք յափշտակում, իւրացնում էին ժողովրդի սեփականութիւնը՝ համարելով այդ բոլորը իրանց «փարաջի գինը»: Եկեղեցին ջոկում էին ժողովրդից, ոչ միայն հօգրներով առաջ չէին պաշտպանում թոյլերին, այլ իրանք էին խլում ժողովրդի իրաւունքները և աշակցում, շողորմութեամբ բռնաւարդներ: Ժողովրդի լուսաւորութիւնը իրանց ձեռքը գցելով կեղծում էին գիտութիւնը, այլապէս կանգնում էին մատաղ սերնդի միտքը և հոգին՝ ազատ, ալտուրիստական, ժողովրդասէր քրիստոնէական եկեղեցու համար պատրաստելով նեղ, կեղեքական, անհամբերող, ետական ոգուով անվանակարի հրէշներ, որոնք իրանց չարագործութիւններով միայն զայրոյթ և զղուանք առաջացրին ժողովրդի մէջ:

Այդ տեսակ հոգեւորականութիւնը ըստ արժանոյն գնահատուից:

L.

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Հազար ներողութիւն եմ խնդրում «Մշակի» խմբագրութիւնից, որ թող եմ աղախ լին՝ «Մշակի» էջերում յիշատակել այնպիսի լրագիրների և մարդկանց անուններ, որոնք վաղուց արտաքսված են այդ էջերից:

Հայոց փողոցային մամուլի միմեանց արժանի օրգանները, իրանց արժանի բարեկամներով, — աւագին, ինչ որ ընդունակ էին աւելու: Մի ամբողջ շարք է այդ բոլոր համբերութեամբ լսում եմ. — այժմ թող լսեն իմ պատասխանը:

Ով կարող էր, ճշմարիտ, մի բոլոր երեկայեւ, որ կը գտնվի մի մարդ, այն էլ «խմբագիր», որ իրան թող տայ ուրիշի հեռագիրները սեփականացնել և նոյն իսկ տպագրել:

Բայց Սպանդար Սպանդարեան այդ չը տեսնված քաջագործութիւնն էլ արեւել իւ. ահա այժմ, երկու շաբաթ անցկենց յետոյ, զգալով, որ ճշմարիտ դա մի չը տեսնված խոյառաւարութիւն է, նոյն Սպանդարեան փորձում է դուրս պրծնել այդ վերջնական խոյառաւարութիւնից:

Բայց ինչու: Ան, ինչ որ ապացուցված է պաշտօնական զօկումէնտներով, չէ կարելի հերքել դատարկ բառերով, ստախոսութիւններով, հայհոյանքներով:

Վերջին անգամ կրկնենք փաստը:

Նոր-Նախիջևանից, մարտի 26-ից ստացված հեռագիրները, երեք թերթերի միջոցով, ինձ հասցնելու համար, Սպանդար Սպանդարեան սեփականացրել է:

Որպէս զի որ և է կասկած անգամ չը լինի, մենք առաջ կը բերենք Թիֆլիսի պատահաւորական գրասենեակի կառավարչի պաշտօնական զեկումէնտը, որ մենք ստացանք համաձայն մեր տուած յայտարարութեան № 5118:

Ահա.

«Имѣю честь увѣдомить И. С. Спендиарова, что 26-го марта сего года, дѣйствительно была получена телеграмма изъ Нахичевани на Дону, за № 438, съ адресомъ: «Редація «Мшакъ», Спендиарову, копія «Норъ-Даръ» Спендиарову, «Ардаганъ» Спендиарову»:

Այդ հեռագիրները ստացել է անանուն թերթի խմբագրատեղում, ստորագրել է հեռագիրների ստացականներով վրա, որոնք, իբրեւ զօկումէնտ, պահվում են պատահաւորական գրասենեակում:

Ուրեմն այն փաստը, որ Սպանդար Սպանդարեան սեփականացրել է ուրիշի հեռագիրները, ապացուցված է վերջնականապէս:

Պատասխան վարչութիւնը այդ անկասկած, ապօրինի վարմունքը պատժելու համար, պաշտօնական զօրութեամբ և մ. օ. ք. և մ. օ. ք. և մ. օ. ք. Սպանդարեանին. «Передайте прямоу адресату г-ну Спендиарову обѣ телеграммы, неправильно имѣ задержанныя»:

Ուրեմն՝ այլ եւ ոչ մի կասկած չէ կարող լինել, որ կատարվել է մի անկասկած, ապօրինի գործ, որի հերոսն է Սպանդար Սպանդարեան:

Սակայն այդ պարոնը չէ բաւականացել ուրիշի հեռագիրները սեփականացնելով, այլ նա մինչև անգամ համարձակվել է հրատարակել:

Եւ երբ այդ երկու, մէկը միւսից աւելի կեղտոտ վարմունքի դէմ բողոքեցի թէ եւ և թէ

ամբողջ հասարակաց կարծիքը, Սպանդար Սպանդարեան ակնյայտ ճանապարհներ որոնել, դուրս պրծնելու համար...

Եւ փոխանակ դուրս պրծնելու, այդ պարուն նոյն փոսի մէջ գործել երկու ուրիշ անձանց հետ... «Միշտ» Սպենդարով, պատճէնը ուրիշ լրագրողներին: Գա կը նշանակէ, որ այդ հեռագիրը խմբագրութիւններ միջոցով ուղղած է ինձ: Ոչ մի օրինակուր մարդ, ոչ մի օրինակուր խմբագրութիւն չէր կարող բաց անել այդ հասցեով եկած հեռագիրը: Ետ շատ, եթէ այս կամ այն խմբագրութիւնը չուզէր հասցնել ինձ, պէտք է չընդունէր հեռագիրը, այդ մէկը: Արա երկրորդ՝ դուք մոռնում էք, որ ձեր հեռագիրը բովանդակութիւն է ուղղված է անձանք ինձ և նրա բովանդակութիւնը ոչ ոքի համար, բացի ինձանից, հասկանալի լինել չէր կարող:

Ուրիշ բան է, եթէ դուք հասցէի վրա գրէիք միմիայն լրագրի անունը, և քնադրի ձակատին «ПРОСИМЪ НАПЕЧАТАТЬ» խօսքերը:

Բայց դուք այդպէս չէք արել. ուղարկել էք հեռագիրը այն ձևով, որ ոչ ոք իրաւունք չունէր նոյն իսկ բանալ, ուր մնաց թէ տպել. — այժմ, յետին թիւով հեռագիրներ էք պատում, աշխատելով մի կերպ արդարապէս Սպանդար Սպանդարեանի չը տեսնված, չը լսված, անօրէն վարուելով: Բայց այդ չաղովից:

Եւ այդպիսով մնաց պարզեցված՝

1) Որ Սպանդար Սպանդարեան սեփականացրել է ուրիշ հեռագիրը:

2) Որ տպել է մասնաւոր հեռագիրը:

3) Որ Նոր-Նախիջևանից հեռագիր ուղարկողները, այդ յանցանքը կատարվելուց երկու շաբաթ յետոյ, կամ ուրիշ խօսքով՝ յետին թիւով են ուղարկում ծածկել այդ յանցանքը և արդարացնել յանցաւորին. — դա էլ տեղի է, անարդար, և զղուելի:

Ելի երկու խօսք:

Պ. Ալաշլեանը թէպէտ չարունակում է Դոնի ափերից բաժնակէ գնդակներ արձակել իմ հասցէին, բայց չէ նկատում, որ դա տղայական խաղ է, ինչպէս տղայական էր և այն չըջարեական հեռագիրը, որ վերջում կուտածաղիկ դառաւ միմեանց արժանի երկու դաշնակիցների՝ Սպանդար Սպանդարեանի և Արդար Բովանդարի սեանի մէջ և որի առիթով վերջինը, որքան էլ այդ անհաճոյ էր նրան, իր դարմանը յայտնեց այդ «ասպետին»: Ապետութիւն չէ, պ. Ալաշլեան, հեռուից «КУДАЖЕ ВЪ КАРМАНѢ ПОКАЗЫВАТЬ». եթէ դուք մոռացել էք, որ ճշմարիտ ասպետների մէջ ընդունված զէնքը այլ է, ևս ձեզ յիշեցնում եմ և մի և նոյն ժամանակ իմ պատրաստութիւնն եմ յայտնում ձեր առաջին կոչին արձագանք տալ. թող մեզ բաժանող կովկասեան սարերի մերձակայ լանջը լինի այն ասպետական պատուանդանը, որի վրա միայն ևս թող կը տաժ ձեզ, իբրև իմ հակառակորդիս, մոտենալ ինձ: Այդ խօսքերը ընդունեցեք իմ կողմից իբրև հրաւեր ձեր անարդ և միանգամայն տղայական սպառնալիքների դէմ:

Տեկին Ե—ին ասել ոչինչ չենք կամենում... այսօր քանի միայն կը նկատուի, որ համեստութեան սահմանից դուրս գալով, յիշեալ տիկինը, առանց որ և է կարեորութեան, չտապեց հասարակութիւնը զրադեցնել անհետաքրքիր նիւթով. խոհեմութիւնը կը պահանջէր իր անձնաւորութեամբ այնքան աղմուկ չը հանել և համեստաբար խոյս տալ ուրիշներին իր անձով զրադեցնելուց:

Իսկ «Արձագանքին» մենք նոր բան չենք կարող ասել. պէտք է կրկնել այն, ինչ որ շատ անգամ մեզանց լսել է Սպանդարեանի արժանաւոր դաշնակից Արդար Բովանդարի արձագանքների մէջ իր գոյութեան անունը որոնող թերթը պէտք է բնականաբար լուսանշններ թափէ...

Այս է մեր պատասխանը, որ մեզանից անկախ

պատճառով չը դուրս եկաւ «Մշակի» շաբաթ օրվայ համարում:

Իսկ դաւով մեր անմոռանալի ընկեր՝ բարեկիշատակ Լևոն վարդապետի կտակին, կրկնում ենք այս անգամ ևս, որ մեր քաղցր և սրբազան պարտականութիւնը համարեցինք այդ անարատ եկեղեցականի և ճշմարիտ քրիստոնէայի վերջին կամքը կատարել, և կատարեցինք:

Յովհ. Սպենդարեանց

ԳԻՆՈՒ ԱՅԻՅԷ

Երբ անցեալ տարի Ֆինանսների մինիստրութեան մէջ ծառայող Մինցովի եկաւ կովկաս և սկսեց հարց յարուցանել ակցիզի մասին, նա հանգստացնում էր բոլորին, թէ գինու վրա ակցիզ չէ դրվելու, այլ նա քննութեան է առաջարկում այդ խնդիրը միայն այն նպատակով, որ գինեգործութեան բարեօրոշման խնդիրը առաջ մղի և գինու կեղծելու դէմ միջոցներ մշակի:

Բայց քանի գնաց ասելի ու ասելի պարզվեց, որ պ. Մինցովի նպատակը հենց այն է եղել, որից վախենում էին ամենքը, որ նա իսկապէս միայն ձգտում է գինու ակցիզը աշոյցեցնել և ակցիզի անունը ծածկելով՝ նա ուղարկ է համակրական խօսք և խոստում վերցնել գինեգործական շրջաններին, որպէս զի նրանցով կարողանայ տպաւորութիւն գործել մինիստրութեան մէջ կազմած խորհրդակցութեան վրա:

Չանաղան մասնագիտական հիմնարկութիւններ, գիւղատնտեսական ընկերութիւններ զարգացնելու այդ խնդրով, լաւ գիտեցաւ, որ Մինցովի հանգստացնող խօսքերը կարող են յանկարծ փոխվել իրականութեան վրա յիշատակ, մի երկու շաբաթից յետոյ, մայիսի սկիզբներին Պետերբուրգում պէտք է պաշտօնապէս քննութեան ենթարկվի ակցիզ դնելու խնդիրը և եթէ հաւանութիւն գտնի, իրականացվի և գործադրվի:

Կայսերական կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը անցեալ տարվանից արդէն ուշի ուշով հետևում է այդ խնդրի զարգացման և կազմել է մի առանձին յանձնաժողով, որ արդէն վերջացրել է իր պարագլուխները և այսօր, ապրիլի 18-ին, պէտք է ներկայացնի ընկերութեան ընդհանուր ժողովի քննութեան:

Յանձնաժողովը մանրամասնաբար քննելով Մինցովի ծրագիրը, գտել է նրան սխալ, կեղծ պատճառաւորութիւնների և խախտում հողի վրա հիմնված, և այդ պատճառով գալիս է այն եզրակացութեան, որ ակցիզ մտցնելը ոչ մի լաւ հետեւանք չը բերելով, կը տայ շատ վնասակար և վտանգաւոր արդիւնք:

Յանձնաժողովի զեկուցման զլխաւոր կէտերի մասին կը խօսենք միւս անգամ:

ՆԱՄԱԿ ՆՈՒԻՈՒՑ

Ապրիլի 8-ին

Նուխու գաւառից շատ թուրքեր դիմել էին ուր որ հարկն է, խնդրելով թող տալ իրանց գաղթելու թուրքիս: Անհամբեր սպասում էին պատասխանի և այնքան մեծ յոյս ունէին, թէ իրանց թող կը տրվի, որ շատերը սկսեցին վաճառել իրանց ունեցած կաշքը, շատերն էլ կը տորեցին իրանց այգիների ծառերը և խաղողի օրթերը ու բերին չուկայ վաճառելու իբրև վառելափայտ:

Սրանց դաղթելու պատճառը յայտնի չէ, բայց այսքանը յայտնի է, որ սրանց մէջ կան այնպիսի անձնաւորութիւններ, որոնք պղտորում են միամիտների միջքը, յուսալով որ իրանք կը շահվեն:

Մի քանի ժամանակ առաջ խնդրատուններին յայտնեցին, որ առ այժմ մերժված է նրանց խնդիրը, նաև խրատեցին չը լսել այն մի քանի անպիտաններին, որոնք իրանց շահը ի նկատի ունենալով՝ մոլորեցնում են նրանց, և այդպիսով վնասում են նրանց տնտեսութեանը:

Ապրիլի 4-ին թուրքերի բարբոքումից վախճանվեց տեղացի Մարտիրոս Արքամանը, 46 տարեկան հասակում: Նա իր կրթութիւնը ստացել էր Ներսիսեան դպրոցում, և մի քանի տարի ուսուցչութիւն անելուց յետոյ, գնացել էր Եփէջարիա ուսումը շարունակելու. վերադառնալով՝ կրկին շարունակում էր ուսուցչութիւնը իր հայրենիքում: Այդ ժամանակները Նուխու հայ հասարակութիւնը շատ նեղ վիճակի մէջ է եղել գտնվում: Երբ ակցիզի մի քանի աւաղակ թուրքերի անվերջ

յարձակումների պատճառով, ոստիկանութիւնն էլ, չը նայած իր մեծ ջանքերին, դուռարանում է եղել վերջ տալ այս անկարգութիւններին: Հանգուցեալ Արքամանը, տեսնելով այդ բանը, թողնում է ուսուցչութիւնը և սկսում է քարոզել ժողովրդին պատրաստ լինել և աշակցել ոստիկանութեանը քաղաքում կարգ պահպանելու, աւաղակութիւններ և անկարգութիւններ անողներին ձեռք բերելու համար: Ինչպէս պատմում են, նա չունէր հանգիստ ոչ գիշեր և ոչ ցերեկ, միշտ զինված պատրաստ էր իր անձը դնելու քաղաքացիների շահերի և հանգստութեան համար: Հանգուցեալը հեղինակութիւն ունէր և թուրքերի մէջ. նա յայտնի էր «Մարդի աղա» անունով:

Ամսի 6-ին կատարվեց հանգուցեալի թաղման արարող հանդիսարարութիւնը: Գաղաղի վրա դրված էին ութը պսակներ թարմ ծաղիկներով. երկու հողի դամբանական կարգացին: Չը նայած սաստիկ անձրևին՝ յուղարկաւորութիւնը չքեղ եղաւ. այսպիսի չքեղ թաղում Նուխում առաջին անգամն է լինում:

Գ. Ղ.

ՆԵՐՍԻՍ ԼՈՒԻՍԻՐ

Մեզ գրում են Երզրումից, հաստատ աղբիւրից, հետեւեալ ուրախալի լուրը. «Երբօպական դեղեգատների պահանջմամբ, և Կ. Պոլսից ստացված կարգադրութեան հիման վրա, հայ բանտարկեալներ վիճակը շատ թեթեւացրած է, համեմատելով առաջվայ տանջանքների հետ: Առաջվայ ծեծք, մարմնական տանջանքները, սովի ենթարկվելը՝ բոլորը արգելված է և հրամայված, որքան կարելի է լաւ վարվել բանտարկեալների հետ: Կապած կայ միայն, որ քննիչ յանձնաժողովի հետ նախուց յետոյ՝ նորից կը սկսվեն առաջվայ խրատութիւնները:

Թիֆլիսի քաղաքապետի ընտրութեան օրը, որ նշանակված է ապրիլի 24-ին, մոտենում է, և մեր քաղաքային ձայնաւորների մէջ կանդիդատներ չարքը քանի գնում, ասելի պարզվում է: Մի քանի կանդիդատներ, որոնց մասին առաջ խօսք կար, այժմ բոլորովին մի կողմ են թողնված, և հաւանական կանդիդատներ այժմ մնում են երկու հողի՝ իշխան Նիկոլայ Արզումանյանի և Ալեքսանդր Մարտիրոսի:

Մուշից ստացված մասնաւոր տեղեկութիւններից երևում է, որ Սասունի հերոս Մուրադը, իր մի քանի ընկերներով, Բիթլիսի բանտից տեղափոխված է Մուշ, և պահվում է մի առանձին սենեակի մէջ. Ներսէս վարդապետ խաբախանեանի հետ միասին, խիստ հակողութեան տակ:

Պետերբուրգի նահանգի հինգ գիւղերում նորերս վճիւ է կայացել բանալու ժողովրդական գիւղական դպրոցներին կից արհեստագիտական բաժիններ:

Երզրումից, արժանահաւատ աղբիւրից, մեզ գրում են հետեւալը. «Մահմադականների ֆանատիկութիւնը այն աստիճանի է հասել, որ նոյն իսկ թիւրք զինուորների մի խումբ, հակառակ իշխանութեան կամքի, վճռած է եղել յարձակում գործել հայերի վրա: Վաղին վախճալով պատասխանատուութիւնը, խիստ կերպով արգելեց այդ բանը, և երբ այդ խումբ զինուորները չը հնազանդվեցին, հրամայեց 30 հողու հրացանի բռնել:

Երկ ստացած «Новое Время» լրագիրը, իր ապրիլի 12-ի համարում տպագրել է մի նամակ Կ. Պոլսից, որը փորձում է հերքել ամեն բան, — հաստատելով, որ Հայաստանում տիրում է կատարեալ խաղաղութիւն, որ Սասունի կոտորածի լուրերը ճիշդ չեն, որ սուլթանի և իդմիլեանի յարաբերութիւնները լարված չեն, և այլն և այլն, աւելացնելով, որ այդ «անհիմն» լուրերը հաղորդել են ի միջի այլոց և Թիֆլիսի հայոց լրագիրները: Այդ խօսքերից յետոյ՝ նամակագիրը բացաւ կանչում է. Voila comme on ecrit l'histoire: Իբր պաշտոյց, որ սուլթանի և իդմիլեանի յարաբերութիւնները շատ լաւ են, նամակագիրը ասում է. «Հենց այս օրերս սուլթանը շնորհեց հա-

յոց պարտիաբերին առաջին աստիճանի Օսմանիէ»: Պատիւ ունենք ասելու յողուածագրին, որ մինչև այսօր սուլթանը ոչ մի Օսմանիէ չէ շնորհել իդմիլեանին, և ինչպէս երևում է միտք էլ չունի շնորհելու... Եթէ թղթակցի լուրը լուրերը այնքան ճիշդ են, որքան այդ, այն ժամանակ յիշաւ մենք կարող ենք կրկնել՝ Voila comme on ecrit l'histoire.

Մեզ հաղորդում են, որ ուրբաթ օր, ապրիլի 21-ին, արքունական թատրոնում ուսուց դրամատիկական խումբը պէտք է ներկայացնի Գ. Սունդուկեանի «Ամուսիններ» կոմէդիան: Խաղին պէտք է մասնակցեն խմբի լաւ ուղեւոր: Որքան մենք գիտենք, առաջին անգամն է, որ այդ պիեսը ներկայացվում է ուսուցիչի լուրով:

Այսօր, երեքշաբթի, ամսիս 18-ին, կայսերական կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում նշանակված է ընկերութեան ընդհանուր ժողովը: Հեղինակայն դործերը վերջանալուց յետոյ, ժողովի պարագլուխները լինելու են. 1) Գինու ակցիզ դնելու ծրագրի քննութիւնը, 2) Ա. Եւսեբուովի զեկուցումը հացի առևտրի ձգնաժամի մասին և 3) իշխ. Անդրօնիկովի առաջարկութիւնը՝ հիմնելու մի բերօ գիւղատնտեսներին օգնելու նպատակով: Սկիզբն է 7 1/2 ժամ մին երեկոյան: Կարող են ներկայ լինել և կողմնակի անձինք:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ԱՆԳԼԱՅՑ

Լճոյն, 1/13 ապրիլի

Այս օրերս «Daily Chronicle» լրագիրը մի հետաքրքրական տեսակցութիւն հրատարակեց հայկական հարցի մասին: Այդ տեսակցութեան ժամանակ M-me Novikoff, որ այստեղ, Անգլիա, Ռուսիոյ քաղաքական ներկայացուցիչ ճանչցուած է, մի քանի անկանխելի ճշմարտութիւններ դրած է անգլիական հասարակութեան առջև: Այս վերջինս պարտի այդ հատիկներն կլանել. յուսանք թէ արդիւնաւոր լինին:

Ամեն անգամ, երբ արտաքին գործերի նախարարութիւն կամ պաշտօնական ո ո է մարմին ստիպուի հայկական հարցի վրա բացատրութիւն մի տալ, ամենակարևոր լուրն է՝ Անգլիոյ այժմեան հայտ և սերտ յարաբերութիւնն Ռուսիոյ հետ. M-me Novikoff այն միտքն է յայտնում, թէ այս անգամ Ռուսիան նախաձեռնութիւն պիտի չը ստանձնէ, բայց սիրով պիտի հետևի Անգլիային, որչափ որ ան համարձակի խիղախի:

1876 թուին Ռուսիա ամբաստանուց իր ըստանձնած նախաձեռնութեան համար, այժմ ալ թող ամբաստանուի իւր ձեռնպահ մնալուն համար: 1878-ին Ռուսիան իւր պարտականութիւնն կատարեց 100.000.000 ծախքով և 100.000 կենսը դոնելով և Սան-Սթեֆանոյի դաշնագրութեամբ քրիստոնեաներն աղատեց. բայց լորդ Բիկոնսֆիլդ Մակեդոնիան դարձեց թիւրքիային և Հայաստանի բարեկարգութեանց մասին նիւթական ապահովութեան վերջինը: Եւ իբրև վարձք քրիստոնեական դատին այս դաւաճանութեան՝ իկարող ստացաւ, զին արեան, որ այժմ առաւորէն թափվում է ի Հայաստան: Եթէ ոք խաբէութեամբ 6 պէս կորդէ՝ ուղղակի բանտ կը դրուի, բայց Բիւ ընելու է, երբ մէկը, ճիշդ նոյնչափ խաբէութեամբ ամբողջ կղզի մը կորդած է, կը հարցնէ M-me Novikoff:

Անգլիական նշանաւոր թերթեր կը շարունակեն տպագրել հայոց նպատաւոր յողուածներ և նամակներ, ի բաց առեալ մի քանի յայտնապէս թրքասէր թերթեր, որք տեղի և անտեղի սուլթանի մարդասիրութեան և քաղաքալարութեան կողմնակի, իբր պաշտոյց թրքական անգլիկութեանց սխալ, կամ գոնէ չափազանցած լիւնելուն: Ասոնցմէ մէկի՝ «Փէլ-Մէր-Կազէթի» խմբագիրը Կ. Պոլսի դաջած և սուլթանին սիրալիւ ընդունելութիւն վայելած է: Սուլթանը յատկապէս խնդրած է, որ իբր անկողնակալ քննիչ երթայ Սասուն, և տեղեկագրէ: Այո, առ երեսու լաւ ընդունելութիւնը սուլթան Համիդի մեծագոյն միջոցն է՝ երօպացիները խաբելու համար: Վերջինիս խմբագրին, պաշտպանութեամբ և առաջնորդութեամբ թիւրք պաշտօնեաների և ոստիկանների, պիտի երթայ Հայաստան և տեսնէ

միայն այն, ինչ որ ստացա ցուցնեն իրեն և զայն
երգել սուլվանի և թիւրք կառավարութեան դո-
ւլտաններն և 1878-ից ի վեր ի գործ դրած բարե-
նորոգումներն ի միջի այլոց «Daily Telegraph»
լրագրի Հայաստանի թղթակիցը, իւր ընտիր նա-
մակներով կը շարունակի հայկական դատին մի-
կարոր մղում տալ. թրքական բարբարոսութիւն-
ները այլ ևս գաղտնիք չեն կրնար մնալ:

Մայիս 7 նշանակված է իբրև մեծ ազգային
ցոյցի օր, ի նպատակ հայկական հարցի. կարևոր
անձնավորութիւններ են խոստացել ներկայ դը-
մովիլ մեծ ժողովին, որ տեղի պիտի ունենայ
այդ օր ի Լոնտրա, և Անգլիոյ ամեն կողմերէն
նուիրակներ պիտի գան մասնակցելու:

Այս ցոյցն էլ պիտի զայ բարդուի նախորդնե-
րուն վրա, և երբ ցոյցին պատճառած առաջին
յուզուեմն անհետանայ, և մենք մեզի դանք ու
հարցնենք—ինչ մնաց այս ամենէն, ներքին ձայն
մի պիտի պատասխանէ—ուշինչ: Յարգեալ եղանակ
միայն խօսք է. անգլիացին կը հրաւիրվի ի մի-
տինդ, կուգայ, կը լսէ և պաղարհուրդեալ
տուն կը դառնայ, splendid meeting, some power-
ful speeches աղաղակելով:

Բայց անգլիացին դարձնական ազգ է, և իւր
ժամանակն ընդունայն չի վատնիր. խիղճն ալ
զինքն կը յանդիմանէ, եթէ բան մը չըրած տուն
դառնայ: Գոնէ resolution մի կը քուէարկէ միա-
ձայնութեամբ իր համակրութիւնն յայտնելով բազ-
մաչափար հայ ազգին և ինդիքով իր կառավա-
րութենէն, որ ի նպատակ նրա միջամտի Ո՛հ, այս
յիշատակագրեր. մենք ալ յոգնեցանք, կառավա-
րութիւնն ալ ձանձարեցաւ զայն ընդունելէ: Բայց
կրկին ամեն ինչ իւր տեղն է. թիւրքն իւր խո-
ղովութիւնները կը շարունակէ, սուլվանն սըր
Ֆիլիպ Բերքլին քաղցրիկ սուտի և խոստմանց
հատկութիւնով խաբելով, և ոչինչ, բնաւ ամենակ
ոչինչ ի գործ դնելով:

Անգլիացին շատ պարզամիտ մի ազգ է: Քանի
քանի անգլիացիներ, առանց ու և կասկածի կը
յայտարարեն, թէ Անգլիա պարտ է ի գործ դնել
իւր աղքատութիւն և աղատել հայերն, որպէս ա-
ղատեց Պոլիարիան: Եւ իրօք կը հաւատան, թէ
Պոլիարիան Անգլիային է պարտ իւր աղատու-
թեամբ: Գրեթէ մեծ անդիւթիւններն է իմ կող-
մէս, երբ կը ցցեն, թէ ճշմարտութիւնն ասոր
միջոց հակառակն է, թէ Անգլիա ամեն ինչ ըրաւ
Պոլիարիան թիւրքին ձանկէն մէջ պահել: Այս
յիշարդ մեծ յուսախաբութիւն առաջ կը բերէ անգ-
լիացիներու մէջ, բայց ինչ ընեն, քանի որ ճշմար-
տութիւնն այդ է: Կապոյտ գրքին վրա 1878
թւին, № 38, երես 1, ուր ըրող Սոլպարի գրելով
Պէրլինի դաշնագրոյն ստորագրուած օրը, յուլիս
13, 1878, պարծանքով կը յիշէ այն ամենն, ինչ
որ կրցան ընել, հնար եղածին չափ օգնելու
մարդկայնութիւնը թիւրք կառավարութեան, թէ Սան-
Ստեֆանոյի դժած մեծ Պոլիարիայի 2/3 մասն
կրկին սուլվանի կառավարութեան տակ դրուե-
ցաւ, թէ Սև ծովու եղբայրն կէսն յետոյ թիւր-
քին յանձնուեցաւ և այլն...

«Որ ունիցի տացի նմա», կըսէ Աւետարանը:
Պարզամիտ անդամները հազար ոսկոյ մի գու-
մար ստացան ի նպատակ հայկական հարցի ջան-
քերին շարունակելու: Պ. Կլաւսթիսի ընծայուե-
լիք Աւետարանն դեռ չեկաւ: Կերել թէ նոյն պ.
Կլաւսթիսն ուղղեալ մի ուղիքն ևս ճամբայ
դրուած է: Յոյս կայ, որ ի մօտոյ հասնելով
պարտ ու պատշաճ կերպիւ իրեն կընծայուի:

Հայկական շրջանակաց մէջ կարծիք կը յայտ-
նուի, թէ այս պարագայիս մէջ Մանչեսթրի հա-
յոց հովուութեան պաշտօնի մէջ մի գիտցող, աղ-
ղեցիկ, լեզուազէտ առաջնորդ լաւ գործ կրնայ
տեսնել, հայոց դատին մէջ օրինաւոր պաշտպանն
ու ներկայացուցիչն ճանչցուելով հրապարակաւ:
Ո՛ր էր թէ մի այդպիսի ոք գտնվիր, և եթէ չը
կայ՝ ստեղծ ու էր մէկն:

Լոնտրայի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՆ

—Անգլիական «Daily News» լրագրի վիշնայի
թղթակիցը գրում է հետեւեալը. «Այստեղ տեղի-
կութիւնն է ստացված, որ Ռուսաստանը վրդու-
ված է այն տնտեսական և առևտրական պայման-
ներով, որ մտցրել է Եւրոպիան Չինաստանի հետ

կապված դաշնագրի մէջ, որովհետև այդ պայման-
ները կատարելապէս ոչնչացնում են Ռուսաստա-
նի և Չինաստանի մէջ ներկայումս գոյութիւն ու-
նեցող առևտրական ծաղկած յարաբերութիւնները:
Վախենում են նոյնպէս, որ Սիբերի երկաթուղին
կը վնասվի, եթէ Չինաստանը կը հիմնի սեփա-
կան գործարաններ, որովհետև այն ժամանակ նա
կարիք չի ունենայ եւրոպական ապրանքներ, որ
պատրաստվում էին Սիբերի երկաթուղով մեծ
քանակութեամբ ուղարկել այնտեղ: Ռուսաստանը
պատրաստվում է նոյնպէս իր առևտրական պայ-
մաններն առաջարկել Չինաստանին և պահանջել
նրանից առևտրական զիջումներ, որպէս զի կա-
րողանայ վարձատրել իրան այն վնասի փոխարէն,
որ հասցնում է նրան եւրոպական քաղաքակա-
նութիւնը»:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 15 ապրիլ: Հինգշաբթի, Կայս-
րուհի Մարիա Ֆեոդորովնա զրոստանից յետոյ
Անիչկովեան աշգուժ՝ բարձրանալով դէպի պա-
լատը, վնասեց իր ոտը: Յաւը շատ դժուար
ուղեւորը չափաւոր: Բնդհանուր դրութիւնը կա-
տարելապէս բաւարար է:
Հրատարակված է Բարձրագոյն հրովարտակ
Կայսր Ալեքսանդր III-ի ուսուց թանգարան
հիմնելու մասին: Թանգարանի շինութեան համար
հրամայված է տալ դանձարանի գնած Միխայ-
լովեան պալատը: Հրովարտակը վերջանում է
հետեւեալ Ամենաօրոգիւմ խօսքերով, «Թող այդ
հիմնով թանգարանը կենդանի յիշատակ լինի
նրա արքայական հոգածութիւնների և քաջու-
թիւնների, Որը այնպէս ջերմ կերպով մի-
րում էր հայրենիքը և նուիրեց իր կեանքը
նրան ծառայելու համար: Թանգարանի զինաւոր
վերահսկողութիւնը գրված է Մեծ Խլխան Գեորգի
Միխայլովի վրա:

Հինգշաբթի, Մեծ Խլխան Վալդիմիր Ալեքսան-
դրովիչ պալատում տեղի ունեցաւ գինեւոյ
կուրսիականի հաղորդագրութիւնը «Ժամանա-
կակից Պարսկաստանի տեսութիւն» վերնագրով:
Գինեւոյ մասնագոյց արաւ այն հանգամանքի վրա,
թէ անհրաժեշտ է շատ շուտ ակնել թղթատրված եր-
կաթնուղու կառուցումը: Թիֆլիսից մինչև Երևան
և շարունակել մինչև Զուլֆ և այնտեղից էլ մինչև
Թաւրիզ, շատ շուտ կառուցանել կառուղի Աստա-
րայից Արդաբիլով մինչև Թաւրիզ և բարձրել
կառուղին Ասխաբադի և Մէշէի մէջ:

ԼՕՆԴՈՆ, 14 ապրիլ: Պէկինից հաղորդում են,
«Գործերի դրութիւնը կիրառական է: Մի քանի
գինեւոյներ պնդում են պատերազմ շարունակե-
լու վրա: Յէնդորներին շատերը բողբոջում են
խաղաղութեան դաշնագրի վաւերացման դէմ:
Դաշնագրի բնագիրը գտնվում է Կայսրի ձեռքում:
Արտաքին գործերի մինիստրութեան ներկայացու-
ցիչները խորհրդակցեցին մեծ պետութիւնների
գնահատման հետ:

Հեռագրեր յօդագրային. «Ռուսաստանի, Ֆրան-
սիայի և Գերմանիայի բողբոջ խաղաղութեան
դաշնագրի մի քանի որոշումների դէմ մեծ ապա-
ւորութիւն գործեց: Կարծում են, որ գոտար կը
լինի ենթակվել այդ պետութիւնների պահանջ-
ներին:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 16 ապրիլ: «Окрина» լրագիրը
հաղորդում է, որ բարձր կառավարութեանը ա-
ռաջարկված է մի նախագիծ՝ երկաթուղիական
հաղորդակցութիւն հաստատելու Սիբերի և Թուր-
քիստանի մէջ:

ՐՕՍՏՈՎ, ԳՕՆԻ ՎՐԱ, 16 ապրիլ: Նախիջև-
նում գտնվող ամենայն հայոց կաթողիկոսը 500
ր. նուիրեց Կայսր Ալեքսանդր III-ի արձանի հա-
մար, որ պէտք է կանգնեցվի Թեոփոսիայում:

ԼՕՆԴՈՆ, 25 ապրիլ: Ծանգայից ստացված
տեղեկութիւնների համեմատ, Ռուսաստանը խոր-
հուրդ տուեց Չինաստանին մի քանի օրով յետա-
ձգել խաղաղութեան դաշնագրի վաւերացումը:

Եթե համայնից հաղորդում են, որ իբր թէ եւ-
րոպական քաղաքային շրջանները յոյս են դնում
Միացեալ-Նահանգների բարեկամական խորհուրդ-
ների և գործակցութեան վրա, որպէս մի երկրի,
որի շահերն շատ նպաստաւոր է Սինթոսեկի
դաշնագրին:

Ասում են, որ իբր թէ Անգլիան և Իտալիան
յայտնեցին, որ զիտաւորութիւն չունեն միանալ
Ռուսաստանի, Ֆրանսիայի և Գերմանիայի բողբո-
քին:

ՍՕՖԻԱ, 15 ապրիլ: Ստամբուլով, որպէս վը-
կայ հրաւիրվելով դատաստանական քննիչի մօտ,
իր ժամանակին կաշանաւորված օֆիցէր Կիսովի
գործի առիթով հրամարվոյց գալ: Ստամբուլով
պատասխանեց, որ որպէս մինիստր, իր գործո-
ղութիւնների համար նա կը պատասխանի միայն
այն դէպքում, եթէ ազգային ժողովը նրան պա-
տասխանատուութեան կը հրաւիրի:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ			
Ապրիլի 14-ին			
Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ . . .	93	10	4
Բերլինի վրա 100 մարկ . . .	45	45	
Պարիզի վրա 100 ֆրանկ . . .	36	80	
Ռակի . . .	7	43	
Մաքսային կուպոններ . . .	148	50	
Արծաթ . . .	5	70	
Բորսային դիվիդենդ . . .	2-րդ		
Պետ. բանկի 5% տուա 1 շրջանի . . .	3-րդ		
4% պետական րէնտա . . .	99 1/8		
5% ոսկեայ րէնտա 1894 թ. . .	164		
Արեւելեան 5% փոխառ. 1-ին շրջ. . .			
Արեւ. կալ. Պետ. բանկի խաղաղութիւն . . .	2-րդ		
Արաւ. թղթ. . .	211		
4 1/2% վկայակ. Կիւր. հող. բանկի. 101 1/8 . . .			
4 1/2% գրաւական թղթեր կալուած. . .			
Փոխ. կրեդիտ. բնկի. մետալ. . .	150 7/8		
Արաւ. թղթ. . .	99 3/8		
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. . .	101	75	
Ընկերութեան օրկապիտաններ. . .	101	50	
Մոսկովայի քաղաք. օրկապիտաններ. . .	100	25	
Օղէսայի . . .	101	75	
Թիֆլիսի . . .	99 3/8		
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի. . .	101		
— Գրաւ. թղթ. . .	101		

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆԻՄ Է

ՐՕՍՏՈՎ. Սարգիս Կոստանեանց. Չեր ուղարկած
ր. 50 կօպէկ յանձնեցինք Կենտրոնական գրա-
ճառանոցին, որպէս զի ձեզ ուղարկեն Երեւեա-
ն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք:
աշխատութիւնը: Միւս գրքերի համար էլ կարող էք
գրավաճառանոցներին դիմել:

ՆՕՎՕ-ԻՎԱՆՕՎԿԱ. Բ. Հաւանան Դուք խնդ-
րում էք «Մշակ» ուղարկել նոր հասցեով, որը
ուղարկել էք, բայց դուք չէք յայտնում, թէ ա-
ռաջ որտեղ էիք ստանում: Բարեհաճեցէք անմի-
ջապէս հաղորդել, որպէս զի դադարեցնենք հին
հասցեով «Մշակ» ուղարկելը:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակել է Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՍՏԱՆԵԱՆ

ՅԻՄԵՆԱԿԱՆ ՇՈՒԿԵԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՄԵՍՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ — MESSAGERIES MARITIMES
Առաջիկայ շաբաթ, ապրիլի 22-ին, մեկնելու է Բաթումից սոյն ընկերութեան
«Bagdad» շոքերաւ դէպի Կ. Պոլիս, Մարսէյլ, Հալիպ և Լոնդոն:
Տոմարներն ուղղակի հաղորդակցութեան միջև Գարիզ, կարելի է ստանալ Թիֆլի-
սում՝ պակասեցրած գներով:
Նոյնպէս արտասահման ապրանքներ փոխադրելու մասին հարկ եղած տեղեկու-
թիւնների համար, դիմել սոյն ընկերութեան Թիֆլիսի գործակալ՝ պ. Պուպոյ-ին, Դիօր-
ցովայա փողոց, քարվանսարայ նախկին Արծրունի № 127.
1—1

ԴՊՐՈՑ ԵՒ ՊԱՆՍԻՈՆ
Վ. Ի. ՏԷՐ-ՅՈՎ ՍԷՓԵԱՆԻ
(Սոյուզի, Սարգիսայ, փողոց, № 46)
ԱՇԽԱԳՐՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
(№ 37) 5—6

ՄԻՋՈՑ ԽԱՐԿՈՒՄԻ ԴԵՄ
Բժշկական զէպարաամիստից թղթա-
արված
ՕԼԶԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈՒԳԻ-
ԼԻՆ
Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿԻ
Ծախվում է 40 կօպէկով
Կեղագործական Ապրանքների վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ Թիֆլի-
սում (№ 22) 13—30

ԿԱԿԱՕ ԲԼՕՕԿԵՐ
ՍՆԵԴԱՐ ԽՄԻՉԲ (ղլխաւոր պահեստը Ռուսաստանի համար
«ՆԱՎԱ» Ֆիւրմայի մէջ. (С.-Петербург, Большая Морская, 38).
Ծախվում է Կոնստան և Կեղային ապրանքների բոլոր լաւ մաղաղկներում 1/1,
1/2, 1/3 և 1/8 կիւրգրամանոց թիթեղեայ տուփերի մէջ:
(GRAND PRIX) Բարձրագոյն պարգև Անտվերպիէի համաշխարհային ցուցա-
հանդիսում 1894 թւին:
(№ 151) 23—50

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԲՆԱԿԱՐԱՆՍ Անգլիական փողոցից
փոխադրված է Միքայէլեան փողոց
Պայլի տունը, № 63:
Թեմական տեղուհ՝ ՄԵՍՐՈՊ ԲԱԶԱՆԱՅ
1—1

Լոյս տեսաւ
ԱՆՓՈՐՁ ԳԵՈՒ
«ՎԱՐԴ և ՍՈՒԱԿ»
(ոտանաւորներ)
Գինն է 30 կօ:
Դիմել Կենտրոնական գրավաճառանոց:
(№ 43) 1—6

Լոյս տեսաւ
Ս. ԲԱԼԱՆԹԱՐԻ
ՍԱՍՈՒՆ
Գրքերը աշխարհագրական քարտեզով:
Գինն է 20 կօպէկ:
Վաճառվում է «Մշակ» խմբագրատանը
և Կենտրոնական գրավաճառանոցում:
(№ 39) 2—10

Լոյս տեսաւ
ԲԱՅՅԻԻ
«ՈՎ ԵՐ ՄԵՂԱՌՈՐ»
Գինն է 20 կօպէկ:
Դումարով գնողներին 20% զիջում:
Վաճառվում է «Կովկասեան» գրավաճա-
ռանոցում—Կ. Չաքարեա Գրիգորեանի, և
Հեղինակի այրիի մօտ:
Նոյն տեղ և նոյն պայմանով վաճառ-
վում է:
ԲԱՅՅԻԻ
«ՊԱՐՈՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
Գինն է 20 կօպէկ:
Ճանապարհածախսը գնողի վրա է:
(№ 39) 4—5

ԴՊՐՈՑ ԵՒ ՊԱՆՍԻՈՆ
Վ. Ի. ՏԷՐ-ՅՈՎ ՍԷՓԵԱՆԻ
(Սոյուզի, Սարգիսայ, փողոց, № 46)
ԱՇԽԱԳՐՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
(№ 37) 5—6

ՄԻՋՈՑ ԽԱՐԿՈՒՄԻ ԴԵՄ
Բժշկական զէպարաամիստից թղթա-
արված
ՕԼԶԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈՒԳԻ-
ԼԻՆ
Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿԻ
Ծախվում է 40 կօպէկով
Կեղագործական Ապրանքների վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ Թիֆլի-
սում (№ 22) 13—30

ԿԱԿԱՕ ԲԼՕՕԿԵՐ
ՍՆԵԴԱՐ ԽՄԻՉԲ (ղլխաւոր պահեստը Ռուսաստանի համար
«ՆԱՎԱ» Ֆիւրմայի մէջ. (С.-Петербург, Большая Морская, 38).
Ծախվում է Կոնստան և Կեղային ապրանքների բոլոր լաւ մաղաղկներում 1/1,
1/2, 1/3 և 1/8 կիւրգրամանոց թիթեղեայ տուփերի մէջ:
(GRAND PRIX) Բարձրագոյն պարգև Անտվերպիէի համաշխարհային ցուցա-
հանդիսում 1894 թւին:
(№ 151) 23—50